Արձանագրություն N 2

**ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի մայթերի ծառի բների եզերման աշխատանքների ձեռքբերման <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-17/60>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

| | |
|---|---|
| *ք. Տաշիր* | «15» «սեպտեմբերի» 2017 թ |
| | ժ11:00 |
| Մասնակցում էին՝ | |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝ | Ս. Անախասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | Ն. Մուրադյան, Ա.Դիլբարյան, |
| Գնման պատասխանատու/Բացման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | Հ. Կիրակոսյան, Ա. Շահբազյան |
| Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող(ԳՊ/Մհմ) | Ս. Սարգսյան |

1. **Տեղեկություններ <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-17/60>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին**

/Ս. Անախասյան/

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-17/60>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am համակարգի միջոցով բացվել են 2017թ. սեպտեմբերի 15-ին ժամը 11:00-ին, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Տաշիրի համայնքապետարանի շենք, 206 սենյակ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. **<<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-17/60>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

/Ս. Անախասյան/

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

| | | |
|---|---|---|
| 1. | «Պապ և Դավիթ» ՍՊԸ | ՀՀ, Լոռու մարզ, գ. Գուգարք, 3-րդ փող, 9/2 |
| 2. | <<ՇԻՆ>> ՍՊԸ | ՀՀ, Լոռու մարզ, Գետափնյա 45/5 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

/Ս. Անախասյան/

3.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| | Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր |
| 1. | «Պապ և Դավիթ» ՍՊԸ | 6528800 | 1305760 | 7834560 |
| 2. | <<ՇԻՆ>> ՍՊԸ | 11770000 | - | 11770000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. **Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

/Ս. Անախասյան/

4.1 «ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ սահմանված պահանջներին համապատասխան:

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված նվազագույն պահանջներին: «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատված չեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից: Մասնավորապես գնային առաջարկը՝ Հավելված 4 և Մասնակցության հայտի ապահովումը՝ Հավելված 9 առաջին էջը հաստատված է միայն կոնսորցիումի մի մասնակցի կողմից:

**4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ**

| | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1. | «ՇԻՆ» ՍՊԸ | Բավարար |
| 2. | «Պապ և Դավիթ» ՍՊԸ | Անբավարար |

4.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 92-րդ կետի համաձայն «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

## 5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

/Ս. Անախասյան/

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-17/60>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <<ՇԻՆ>> ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

## 6. ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

/Ս. Անախասյան/

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերվ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 19.09.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը 19.09.2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

7. **Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

/Ս. Անախասյան/

<<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-17/60>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության տրամադրման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին ***ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Տաշիրի համայնքապետարանի շենք, 206 սենյակ*** հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝ | | Ս. Անախասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | | Ն. Մուրադյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | | Ա.Դիլբարյան |
| Գնման պատասխանատու/Բացման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | | Հ. Կիրակոսյան |
| Գնման պատասխանատու/Բացման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | | Ա. Շահբազյան |
| Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող(ԳՊ/Մհմ) | | Ս. Սարգսյան |